


ԼԵԻՈՆ ՆԱԻՐՑԻ



Փ Ա Ր Ի Ջ

1929

891.99


Ն-18

ZLWYN
EPYER

891.99
2-18



ԼԵՒՈՆ ՆԱԻՐՑԻ




11257

Փ Ա Ր Ի Ձ

1929

Printed in France

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Իմ անցած օրերի պէս,
Հնացած օրերի պէս,
Հնացել ու անցել եմ,
Մերացել եմ ես...

ԵՂ. ԶԱՐԵՆՅԱՆ



1907-88

ԾԱՆՕԹ ՇԻԵԴՈՒՀՈՒՆ

1.

Յիշում է՛, փրօկէն, այգին.
 Յիշում է՛, Ռուկերբերգը Ձեր.
 Օ՛, տեսայ պօտին Ձեր հին,
 Լսեցի և երգե՛րը Ձեր:

Կուգէի լինել հիւսիսի,
 Հասկանա՛լ ու սիրե՛լ Ձեզ.
 Կուգէի, ինչպէս Դուք, սառոյցի
 Դուլքն անել ու երգե՛լ Ձեզ պէս:

Բայց ա՛յլ է երկիրն իմ հրէ,
 Այնտեղ կեա՛նք, արե՛ւ կայ անմեռ.
 Վախում եմ, որ սիրտս սառէ,
 Հիւսիսում Ձեր, ցո՛ւրտ ու ճմե՛ռ...

4.

Օ՛, սիրտս ինչպէս բռնուն է զարկում...
 Հարբա՛ծ եմ ես, հարբա՛ծ, փրօկէն.
 Կուգէի որ լինէ՛ք իմ գրկում,
 Կուգէի որ բռնո՛րն ինձ գրկեն:

Կուգէի համբոյրները իմ վառ
 Քամո՛ւն տալ ու ամէ՛ն տեղ ցրել.
 Կուգէի իմ կեանքով հրավառ
 Ողջ աշխարհը, տիեզերքը այրել:

... Սիրտը իմ հիւրանոց եմ շինել,
 Բռնորի՛, բռնորի՛ համար.
 Տալիս եմ վարդին էլ, փշին էլ,
 Համբոյրնե՛րս ու սէ՛րս ամմար:

ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻՆ

Օ՛, Ֆինլանդ, օ՛, Սուոմ,
 Օ՛, երկիր հագար լների.
 Ների՛ր ինձ, ների՛ր Սուոմ,
 Որ սիրտս քեզ գոհ չբերի:

Ապրեցի անտառներում քո,
 Լսեցի կանչերը բուռի.
 Տեսայ ես աղջիկները քո,
 Բայց սիրտս նրանց չտուի:

Օ՛, սառն եմ նրանք, շա՛տ եմ սառ,
 Իմ երկրի խեղճերին չե՛ն հասնի.
 Սառն ես դու, քո սիրտն էլ է սառ,
 Իմ երկրին դու երէ չե՛ս հասնի:

Հիւվաշտի՛, քո հողին, ջրերի՛ն...
 Ես մի խեղճ, ես փախած մի պատանդ.
 Օ՛, ների՛ր, ների՛ր, ինձ անտունին,
 Հիւրընկալ իմ Սուոմ, իմ Ֆինլանդ:

ԿԱՏՈՒԻ ԽԱՂԸ ՄԿԱՆԸ ՄԱՀ Է

Տիկին Լորէտին.

1.

Ձեզ այնքան սիրողներ կան,
Այնքան երգ ձօնողներ կան,
Վախում եմ, ժպտուն Տիկին,
Երգերս Ձեզ դուր չգան:

Դուք այնպէս լա՛ւ էք ժպտում,
Սրտիս դէմ դաւեր նիւթում.
Դժուա՛ր է Ձեզ մօտ ապրել,
Չունենալ մի այլ միտում:

Ձեր ձայնը բաւիշի պէս,
Աչերը խո՛ր են այնպէս.
Ձե՛մ կարող, ուրիշի կին,
Չցանկալ, չսիրել Ձեզ:

2.

Դուք ամէն օր քէյ էք բերում ինձ համար,
Մօտս կանգնում ու ժպտում էք անդադար.
Ձե՛մ հասկանում ի՞նչ դիրք բռնեմ, չա՛ր Տիկին,
Որ չ'իմեմ Ձեր աչքումը ես յիմար:

Ասելիքներ ես շա՛տ ունեմ իմ հոգում
Շա՛տ եմ ուզում Ձեզ ունենալ իմ գրկում,
Բայց վախում եմ շատերի պէս, ինձ հետ էլ,
Խաղա՛ք, յոգնե՛ք, ու սէր փնտռե՛ք մօր գրկում:

3.

Դուք այնպէս բողոքեցէ՛ք գիտէք,
Այնքան լաւ պաշտպանեցէ՛ք գիտէք,
Ձե՛մ կարծում փորձե՛րք իմ քոյլ,
Ունենան Ձեր աչքում արժէք:

Երբ ուզէք հետս կը խաղաք,
Յոգնեցի՛ք մայր կը ձեռնաք,
Երբ փորձեմ քիչ ազատ խօսել,
Իսկոյն Դուք. «Ձեմ սիրում համաք»...

ԲԵ. 2

137-59

88-7041

4.

Կատակում էք այնպէս անհոգ ու անվախ,
Մերք լռում էք ու ձեռնում անուրախ,
Մերք էլ կրֆոտ ինձ բառեր էք շնչում,
Դժբաւ զարկում, փախչում հեռո՛ւ, քրքո՛ւմ:

Ես դողում եմ, ցանկանում եմ բռնել Ձեզ,
Բռնել ամուր քեւերիս մէջ Ձեզ այնպէ՛ս,
Ու քաղել Ձեզ, խենթ աչերը Ձեր կրակ
Թաղել իմ խենթ համբոյրների բեռի տակ:



5.

Կուգէի, որ Դուք էլ այրէիք

Այն հրով՝

Որ այրում է ինձ.

Կուգէի, որ Դուք էլ տանջէիք

Այն սիրով՝

Որ տանջում է ինձ...

Բայց Դուք չա՛ր էիք,

Օ՛ր, չա՛ր էիք, շա՛տ չար.

Ու ծպտում էիք,

Ծպտում անդադար:

6.

Օ՛ր, հիմա ես էլ եմ «խաղում»...

Ես էլ եմ սովորել շա՛տ բան.

Հիմ սիրտս քաղել եմ հողում.

Ու սուլում եմ, անգո՛րծ, անբա՛ն:

Կարծում էի, դեռ սիրո՞ւմ եմ Ձեզ...

Ձանձրացայ չսիրած սիրելուց.

Կարծում էի նայն յիմա՞րն եմ ես...

Յոգնել եմ առանց սէր տիրելուց:

Կեղծում եմ, ցանցեր եմ հիւսում.

Շատերին եմ տանջում հիմա ես...

Մի տեսնէ՛ք ի՞նչ բառեր եմ ասում,

Ինչպէ՛ս եմ կանանց շոյում ես...

7.

Գիտեմ, երգերս բարկացնում են Ձեզ.
Գիտեմ, Ձեր աչքի փուշն եմ հիմա ես.
Բայց գիտեմ, որ Ձեր հոգու խորքում
Կուգեի՜ք, որ միշտ երգեմ Ձեզ:

Կուգեի՜ք, որ լինեմ ես նախկինը,
Որ շիկնեմ, որ դադամ Ձեր առաջին,
Որ Ձեր մեջ մեծարեմ միշտ կինը,
Ու լսեմ Ձեր խօսքը վերջին...

Ձեր խօսքը վերջին... Բայց գիտե՜մ,
Լսե՜լ եմ Ձեր խօսքը, Տիկին.
Եթե ողջ երկինքն էլ ծառանա իմ դէմ,
Ինձ էլ չի խաբի հիմա ո՛չ մի կին:

ՓՈՔՐԻԿ ՓԱՐԻԶՈՒՀՈՒՆ

1.

Այնքան նո՛ւրբ են շոյանքները քո,
Նայում ես վրաս այնքան հե՛զ,
Մոռանում եմ մի վայրկեան որ Կօ՛-Կօ՛,
Կօ՛-Կօ՛ են կանչում քեզ:

Մոռանում եմ, որ մի ժամ չանցած,
Ուրիշին պիտի դու շոյես.
Ու նորէն քո խօսքերը հնացած,
Նրան դու նւիրես:

Մոռանում եմ կե՛անքդ, ամէ՛ն ինչ.
Ձե՛մ յիշում հիմա ես ոչինչ,
Ուզում եմ ես, որ միայն քոյդ պէս,
Քրոջ պէս ինձ շոյես...

2.

Երևե՛կ իմանամ աղբիւրը կեանքիդ
Ուրտից փաղում ես այդքան ո՛շտ, եռա՛նդ.
Փոքրիկ աղջիկ ես, բայց ունես ծով սիրտ,
Փարիզի պէս լայն, նրա պէս անմիտ:

Փաղափշանմաներդ հանոյ՛ք մի ժամում,
Իսկ կեանքդ անհուն զրկանքի մի ծով.
Ատում եմ հեռուից, մօտդ միշտ փծնում
Ու չեմ հարցնում՝ ի՞նչ ես և կամ ո՞վ:

Դու ֆեզ միշտ գոհ բեր, գուրգուրիր անտէր
Ի՞նչ արժէ՛ք ունի աշխարհում համայն.
Քեզ մարդիկ կ'ատեն ու միշտ կ'զնեն,
Դու նրանց համար լոկ միս ես միայն...

3.

Ասում եմ դու վա՛սն ես, ծախս'ւ.
Շատերի հոգին ես մաշում.

Ասում եմ աչերդ աղու
Ներկում ես, սուրմա ես փաշում:

Ասում եմ՝ պիտի գայ մի օր,
Երբ լւա՛ծ, ատա՛ծ ամենքից,
Կ'անիծես դու մարդկանց բոլոր,
Յոգնած այս աշխարհից ու կեանքից:

Կուգէ՛ի իմանալ, ի՞նչ կանես,
Ի՞նչ պիտի իմ մասին մտածես.

Պիտ ցաւո՞վ, արցունքո՞վ յիշես,
Թէ՞ ինձ էլ կ'անիծես...

ՓՈՂՈՑԻ ԱՂԶԿԱՆ

1.

Ինչ լա՛ւ էր այսօր, տօն օր էր կարծես.
 Փողոցն էր ուրախ, ուրախ էի ես.
 Դու նորէն անցար, փողոցի աղջիկ,
 Շուրջդ սփռելով և՛ սէր, և՛ ծաղիկ:

Ինչ լա՛ւն էիր դու և ի՛նչ էլ հպարտ,
 կարծես փողոցի թագուհին էիր.
 Նայեցիր դու ինձ, ուրախ ժպտացիր,
 կանչեցիր ծածուկ ու անցար հանդարտ:

Բայց ինչո՞ւ այնպէս գաղտուկ կանչեցիր.
 Ինչո՞ւ հեռացար ֆայլածով հպարտ.
 Իմ վառ յոյսերս ինչո՞ւ խաչեցիր.
 Փողոցի աղջիկ, և՛ լա՛ւն ես, և՛ վա՛տ...

2.

Դու փողոցն ես սիրում, ես էլ քեզ ի՛մ անգին,
 Դու հպարտ թագուհի, քեզ գերի իմ հոգին.
 Ի՞նչ կ'լնի ինձ սիրես, ես էլ քո փողոցին,
 Ի՞նչ կ'լնի ինձ գրկես, ես փաքեմ քո կրծքին...

Կ'դառնամ փողոցինը քէ որ դու կամենաս,
 Իմ աղջիկ փողոցի, կ'դառնամ քեզ ընկեր.
 Դու արևն ես սիրում, ես արև քեզ համար,
 Ես անտուն ու անտէր, դու ամբողջ մի աշխարհ:

Օ՛, եթէ ինձ մօտ գաս, քեզ գրկեմ մի անգամ,
 Ծծեմ քո շուրթերի այդ թոյնը մեղրահամ.
 Ես կարբեմ քեզանով, ինձ համար դու գինի,
 Քո փողոցն էլ ինձ տուն, ապաստան քո՛ղ լինի:

Դու փողոցն ես սիրում, ես էլ քեզ, ա՛յ անգին.
 Փողոցինը դառնամ, քեզ սղմեմ իմ կրծքին.
 Մի ֆի՛չ էլ ինձ սիրիր, ես էլ քո փողոցին,
 Իմ աղջիկ փողոցի, ես կարօտ քո կանչին:

3.

Նորից երեկոն փռեց բերրը...
Հանգիստ նազանգով նեմում ես հիմա.
Քեզ ի՞նչ, թե այստեղ մէկին քո սէրը,
Փողոցի աղջիկ, այրում է հիմա:

Քեզ ի՞նչ, թե այստեղ մէկը քեզ համար,
Ոսկի արեւից երգեր է հիւսում.
Քեզ ի՞նչ, թե մէկին կուրծքը քո մարմար,
Նրազ օրերի հեփեաքն է առում:

... Իմ ցո՛ւրտ սենեակում, արեւ աշխարհի
Արեւծին աղջիկ, քո շունչն եմ շնչում.
Օ՛, երեսկ նրան, ով քեզ կ'սիրի,
Ով քեզ կ'տիրի այս լուռ գիշերում...

4.

Փողոցներից տուն կ'գա՞ս, գիրկդ կառնե՞ս ինձ այսօր,
Թե՞ դեռ պէտք է քափառեմ, սէրդ խնդրեմ ամէն օր.
Քեզ կանչելով ծերացայ, էլ ե՞րբ պիտի ինձ գրկես,
Տե՛ս, ծաղիկներս էլ մեռան, կեանքս էլ ծաղիկ նրանց պէս...

Իմ կանչերը գո՛ւր անցան, կանչերիս ձայն չ'ուիր.
Ինձ տեսնելով հեռացար, ուրիշներին ժպտացիր.
Սէրդ նորերին տւիր, ինձ այնքան շուտ մոռացար,
Ու միս-մեղակ քողանելով դու նորերի գիրկն ընկար:

Փողոցներից տուն չե՛ս գալ, էլ ինձ գիրկդ չե՛ս առնի.
Ինձնից լաւերն ես գտել, սէրդ նրանց ես տալի.
Տե՛ս, ծերացել եմ արդէն, էլ ե՞րբ պիտի ինձ սիրես,
Ծաղիկներս էլ քօշնեցին, կեանքս էլ ծաղիկ նրանց պէս...

ՈՒՇԱՅԱԾ ԿԱՆՁԵՐ

1.

Էն ե՞րբ էր՝ ասիր. «Բռնն եմ ես նորէն».
Հեզնա՞նք էր արդեօք, քէ՞ մի խօսք ի գուր.
Իսկ այժմ հեռո՞ւ, հեռո՞ւ իմ գրկէն,
Ի՞նչ անեմ հիմա, ո՞ւր գնամ ես, ո՞ւր...

Ձէ՞ որ ես ասի. «Բռնն եմ յաւիտեան».

Ձէ՞ չ'հարցրի ի՞նչ էիր, կամ ո՞վ.

Սիրելի խոստացայ մինչեւ գերեզման

Մատերը քո նուրբ, աչքերը քո ծով:

Դէ՛, ե՛կ, եկ գգւենք, փարւենք մենք իրար,

Ձուլւենք աշխարհի հեզնանքին ցաւոտ.

Համբոյր դրոշմեմ այտերիդ մարմար,

Աչքերին քո ծով, շուրթերիդ քունոտ...

2.

Քեզ այնպէս ամուր ես գրկեցի՛...

Երազ էր այդ կարծես.

Թւաց՝ քէ քո շնչով այրեցի

Ու չ'կամ հիմա ես:

Քեզ այնպէս ամուր ես գրկեցի՛...

Քո սէրն ի՞նչ տանջանք է, այդ գիտե՞ս.

Ո՞նց լցնեմ այդ բացը.

Ես Աստուծոյ եմ մոռցել, չ'գիտե՞ս,

Դու իմ նոր Աստուծը:

Քո սէրն ի՞նչ տանջանք է, այդ գիտե՞ս...

Խննդեմք, աղջիկեմք, շա՛տ տեսայ...

Յիշելն էլ նոր տանջանք.

Դու չ'կաս, տանջանք չէ, ի՞նչ է սա,

Իմ անցած անընթաց.

Խննդեմք, աղջիկեմք, շա՛տ տեսայ...

3.

Ե՞րբ էր եկար ինձ այցի.
 Խենթ էիր ու գինովցած.
 Քեզ իմ գիրկը բացեցի
 Ու եղաւ՝ ինչ չէր եղած...

Եկար երգով, ծիծաղով,
 Խենթ կրփեցի նշացիր.
 Գիրկս ընկար դողալով,
 Դողալով էլ գնացիր:

Գիտե՞ս, դեռ իմ շուրթերս
 Դողում են քո համբուրից,
 Ու կարօտած քեւերս,
 Տե՛ս, տենչում են քեզ նորից...

Ե՞րբ էր եկար ինձ այցի,
 Գիրկս ընկար դողալով.
 Ես նրա՞ս մարեցի,
 Մեզ տարերֆին մատնելով...

4.

Քո շուրթե՛րը բոց, շուրթե՛րը գինի,
 Տուր մէկ էլ խմեմ, քո՛ւ ինձ քոյն լինի.
 Այդպիսի քոյնը, երկինքը վկայ,
 Շատին կեանք կ'տայ:

Քեզ ե՞րբ գրկեցի՞... Դեռ արթած եմ ես.
 Հաւատա՛, ջա՛նս, իմ գինին դու ես,
 Ես քե՛զ խմեցի... Այժմ կարօտեմ,
 Քեզ գիրկս եմ բացել:

Բե՛ր, շուրթե՛րդ քե՛ր, քո՛ւ մէկ էլ խմեմ.
 Վախենում եմ ես, քէ որ սքափւեմ
 Լամ ափսոսանքից. քէկու՞գ մահաբեր,
 Բե՛ր շուրթե՛րդ, քե՛ր...

ՀՐԷՈՒՀՈՒՆ

Լիլի՛թ, Լիլի՛թ, ո՞ւր ես Լիլի՛թ...
 Լիլի՛թ սե՛ր, աուսէր ցցեցիր իմ սրտին.
 Խօսեցի՛ր, խոստացա՛ր, ժպտացի՛ր,
 Ու չ՛կա՛ս, էլ չ՛կա՛ս...

Քեզ այնպէ՛ս էի սիրում, Աստուած էլ չէր սիրի...
 Լիլի՛թ տե՛ս, սիրտս գերեզման շինեցիր.
 Հաւատս, Աստուածս խաչեցիր,
 Անաստուած եմ հիմա...

Դարձի՛ր, դարձի՛ր. ես մերժում եմ քեզ...
 Լիլի՛թ տո՛ւր, յե՛տ տուր հանգիստն իմ հոգու.
 Պի՛տ մոռնամ պատմառած ցաւերդ էլ,
 Անչա՛ր եմ ես հիմա...

ՈՒՇԱՑԱԾ ՍԷՐ

... Ու եկար վերջապէս ինձ այցի.
 Նոյնն ես դու. բայց կեանքն էլ հինը չէ.
 Այն մի խենթ երագ էր ու անցաւ.
 Հեռացի՛ր, էլ կեանքն հինը չէ...

Թէ որ դու իմն էիր, էլ ինչո՞ւ
 Ինձ քողած, նոր սե՛ր էիր կանչում.
 Իսկ այժմ ինչպէս խենթ մի գնչու
 Ինձ կեանքի հեքեքսն ես շնչում:

... Տե՛ս, հիմա հիւանդ է իմ հոգին.
 Մի՛ տանջիր, քո՛ղ նրան անխռով.
 Զե՛ս կարող, էլ դու չե՛ս նորոգի
 Այն՝ ինչ որ փշրեցիր քո ձեռով:

* * *

Ես կ'գամ, երբ նորից գեփիւռը զգողուն
Համբուրի ծաղկանց հետ իմ շոյած.
Ես կ'գամ, երբ կրկին նոճիները քոսուն
Շնչան հի՛ն հեփեաթն իմ սիրած:

Ես կ'գամ, երբ հայարտ սա'լիները վսեմ,
Խոնարհւեն, ծունր իջնեն քո առաջ.
Ես կ'գամ, սիրայոյգ քո ձայնը երբ լսեմ,
Սիրոյ խօսք շնչամ քո առաջ:

Ես կ'գամ վառ արփու շողերովը լցւած,
Գարնային ցօղի հետ ես կ'գամ.
Իմ ծաղիկ գեղեցիկ քո հոտովը արբած
Ցօղ համբոյր աչերիդ ես կ'տամ...

ՎԵՐԱԴԱՐՁ

Հիւր էի գնացել ուրիշների մօտ,
Մոռացել էի հայեացքդ խոհուն...
Ու յանկարծ յուզեց սիրտս մի կարօտ.
Օ՛, խենթ մանկութիւն...
Արեւից էլ ջերմ իմ սէրը զարթնեց.
Ես նոր յիշեցի աչերդ քախծոտ,
Ժպիտդ անչա՛ր...
Ու սիրտս ճչաց. տե՛ս քեզ մօտ եմ ես,
Էլ յետ չե՛մ նայի...
Հիւր էի գնացել ու մոռացել քեզ,
Իմ լա՛ւ աղջիկս, իմ սիրտ՛ն քալիկ...

1918

Էլ չունի քաղաքն իր հմայքը հին,
 Ձկա՞ն ալիս ո՛չ խինդ, ո՛չ ծիծաղ.
 Քաղցածներն են, որ մաշում են կրկին
 Մեծ փողոցների մայքերը խաղաղ:

Քաղցածների մէջ ես էլ եմ կորել,
 Ես էլ եմ մում մեռնողների պէս...
 — Տէ՛ր, ողորմեա՛ մեզ... Տէ՛ր, ի՞նչ են արել
 Այս բի՛ւր-բիւրաւոր խեղճ որբերը Բեզ...

...Մեռնող որբերի մոտը շալկած,
 Անգոր գայլաբիւծ միսերս եմ խածում
 Ու անիծում Բեզ, անասունա՛ծ Աստուծ,
 Որ այսօր կանչերը լսել չես ուզում:

ԳՈՒՆԱՏ ԱՂԶԿԱՆ

Մեռելներ, մեռելներ, մեռելներ...
 Ի՞նչն է միշտ անվախման մնացել.
 Այսօր կաս, վաղն էլ դու չե՞ս լինի,
 Դագաղներն են միայն շատացել:

Ու կարծես մեռած ես դու նոյնպէս,
 Այնքան քո՛յլ, անո՛յժ են քայլերդ.
 Նիհարել, գունատել ես այնպէս,
 Թաւմ է մոմից եմ այտերդ:

Աչերդ այնպէս սա՛ռն են դառել...
 Էլ սրտեր շղթայել չես կարող.
 Այնքան ցուրտ հոգիներ ես վառել,
 Իսկ այժմ քայլելու անկարող:

... Ծերացել ու անցել եմ ես էլ,
 Կանչելով օրերին իմ վաղանց.
 Այնքան շա՛տ դժոխքներ եմ տեսել,
 Չեն տանջում էլ մահերը մարդկանց:

ՄԵՌԱԾ ԱՅՆ ԱՂՋԿԱՆ

Մի՛շտ նոյն երգը, այն քան սիրած երգն է հնչում.
Զ'գիտեմ այդ ո՞վ է երգում, ո՞ւմ է կանչում...

... Մի հեփեաք կար, ոսկի՛ հեփեաք, ցնդե՛ց, գնա՛ց.
Մի աղջիկ կար, լուսե՛ աղջիկ, կրա՛կ ու հո՛ւր.
Զա՛ն, հեփեաքից թաց բարձը ինձ բաժին մնաց,
Ու սեղանից յանդիմանող դէմքդ տխուր...

Այդ ի՛նչ սիրուն, խո՛ր ու խոշոր աչեր ունես.
Աչերիդ այդ սեւ քալսիժը սիրտս է մաշում.
Կարծես վերջին իմ համբոյրն է սառել այդպէս,
Ու իմ հայեացքն է փառացել քո աչերում:

Մի՛շտ նոյն երգը, այն քան սիրած երգն է հնչում,
Զ'գիտեմ ո՞վ է միշտ երգում, ո՞ւմ է կանչում...

* * *

Սի՛րտս, վիրաւոր ու աներ սի՛րտս,
Էլ չունի նախկին փայլքը հիմա.
Սի՛րտս, քուռուն, երագո՛ղ սիրտս,
Էլ չունի այժմ երգը միշտ ուրախ...
— Ա՛խ, իմ խեղճ սիրտը լալիս է հիմա,
Անդաքձ հեռացող իմ կեանքի վրայ:

ԱՇՆԱՆ ԵՐԳԵՐԻՑ

Աշման քամին է ոռնում դաշտերում
 Եւ տխուր-տրտուն հառաչում, սուլում.
 Մեղմիկ անձրեւն է երկնքից մաղում,
 Պաղ կաթիլներով իմ խեղճ սեմեակի
 Դռներն է բաղխում:

Դուրսը՝ մառախուղ, երկինքն՝ ամպամած,
 Սեմեակս խաբխուլ ու սիրտս մռայլ.
 Ասես լալիս է ինձ պէս բնութիւն
 Եւ վռվռոյցով իմ սրտին յագնած
 Բերում է աշուն...

ԱՇՈՒՆ

Իմ աշուն սրտում,
 Մի ցաւ է տիրում.
 Անանց մի բուք ցաւ
 Իմ սիրտն է մաշում:

Սիրտս հեկեկում
 Ու լաց է լինում.
 Էլ չ'կա՞ն յոյսեր,
 Զ'կա՞յ սպասում...

ՁՄԵՐԱՅԻՆ

Ձիւնել եմ դաշտերը բոլոր,
 Մշուշ է ու նամբաս անել...
 — Սի՛րտ իմ, ի՛նչ տխուր է այսօր,
 Սի՛րտ իմ, դու էլ ես ձիւնել...

Օրերը կապարի նման,
 Օրերը միալար ու չար...
 Ա՛հ, գոնէ լսէի մի ձայն,
 Գէթ մէկը իմ անունը տար...

Գէթ մէկն ինձ կանչէ՛ր, հմայէ՛ր,
 Հանէր այս անելէն մեռած.
 Գէթ մէկը մեղմօրէն շոյէր,
 Գուրգուրէր իմ սիրտը սառած...

... Ու գիտեմ, թէ վաղն ի՛նչ կ'գայ.
 Մեր վաղն էլ մի երէկ է նոր...
 — Սի՛րտ իմ, մեզ փնտրող չ'կայ,
 Սի՛րտ իմ, մեռակ եմք այսօր...

ԹԱՂՈՒՄ

Մանկութիւնն իմ անցաւ,
 Խե՛նք, ուրա՛խ, անցա՛ւ.
 Երագնե՛րս անծին
 Գնացի՛ն, գնացի՛ն, գնացի՛ն...

Էն ովքե՛ր եմ գալիս,
 Ովքե՛ր եմ լալիս,
 Էլ ո՛ւշ է. հեռացէ՛ք.
 Մի՛ լացէ՛ք. մոռացէ՛ք, մոռացէ՛ք...

ՄԱՀԸ ՄԵՐ ՄԻ ՅԻՄԱՐ ԿԱՏԱԿ

Տի'կ-տա'կ, տի'կ-տա'կ...
 Սահում եմ ժամերն արագ.
 Տի'կ-տա'կ, տի'կ-տա'կ, տի'կ-տա'կ...
 Նոր արևներ եմ ծնում, հին արևի տակ:

Ինչո՞ւ չեմ կարող ես էլ,
 ես՝ որ արեւն եմ տեսել,
 երբեք երգել հանրութեան.
 Ինչո՞ւ չեմ կարող հիւսել
 երբեք ցաւի՛, ծարաւի՛
 Յաղթանակի ու լաւի՛.
 Ձէ՞, ես դժոխքն եմ տեսել...

Տի'կ-տա'կ, տի'կ-տա'կ...
 Մահը մեր՝ յիմար կատակ.
 Անցնո՞ւմ եմք, անցնո՞ւմ արագ,
 Տի'կ-տա'կ, տի'կ-տա'կ, տի'կ-տա'կ...

ԿԵԱՆՔՍ ՏԻԵԼ ԵՄ ՀՈՂՄԵՐԻՆ

Նստել եմ մաւակը ես կրկին,
 Ինձ տւել հողմերին, ալիքին.
 Սիրտս սէգ՝ առագաստ է մի հին,
 Ձե՛մ նայում էլ վաղւան, գալիքին:

Փոքորկա՛ծ է հոգիս ծովի պէս,
 Վաղուց է, որ անդորր մա չունի.
 Անկայան ու անտուն եմ ես
 Ու նման մի մոլոր քոչունի:

Կեանքը իմ տւել եմ հողմերին,
 Ինձ համար չկայ վաղ, ո՛չ գալիք.
 Նստել եմ մաւակս ես նորէն
 Ու աշխարհը դարձրել մի ալիք...

ՏԻՈՒՐ ՄԻ ԵՐԳ

ՍԻՐԵԼԻ ԱՀՈՒՐՆ

Տխո՛ւր է, բարեկամ, շա՛տ տխուր,
 Կեանքը մեր այս ցուրտ հիւսիսում.
 Տխո՛ւր է, աւելի՛ քան տխուր...
 Ու ոչ ոք մեր սրտից չի խօսում:

Սա բումանոիզմ չէ՛... Նայ՛իր,
 Լինդբերգը ովկիանոսն է նեղում.
 Ծովամո՛յն է եղել Քուին.
 Ու հեռում, սառուցէ լեռներում,
 Խորտակել է, չ'կա՛յ «Խտալին»:

Յիշու՛մ ես, փոքորիկ էր, ձիւն էր.
 Ողջ աշխարհն էր սառել, յիշու՛մ ես...
 Բեւեռից «Խտալին» կանչում էր,
 Ճշում էր անթելը՝ էս-Օ-էս:

Ու չ'կայ Ամունդսէնը տիտան,
 Էլ չ'կա՛ն Մալմգրէնը, Գիլբոն.
 Ու այս լուռ դժոխքի վկան
 Մնացել է փոքրիկ մի շուն,
 Մի կապ շուն — ֆոֆստերիէր Տիտինան...

Տխո՛ւր է, բարեկամ, շա՛տ տխուր,
 Կեանքը մեր անթռիչք, անկար.
 Տխո՛ւր է, և դատա՛րկ, և գո՛ւր...
 Ու պարապն այս լցնող չ'կայ:

ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ

ԻՄ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԸ

Անմոռաց Ձարիֆին.

Մի աշխարհ ունեւ արեւի տակին,
 Ուր կեանքն է եռում ու գինին հոսում.
 Մի ծաղկոց սիրուն, դրախտ երկրային,
 Իմ հայրենիքում բլրուն է խօսում:

Գինի է խմում ցեղս հեք-անոս,
 Փրփրո՛ւն գինի ու սէր է երգում.
 Տղայ ու աղջիկ խեղճ պար են բռնել
 Ու մահի կողին՝ ծնունդն օրհներգում:

...Իմ հայրենիքում այնքան մա՛հ, աւե՛ր,
 Եկա՛ն ու անցա՛ն, երազի նման.
 Ինչքա՛ն խեղճ մայրեր, ինչքա՛ն այրիներ,
 Լացի՛ն, գնացի՛ն անտո՛ւն, անվաթան...:

Գինի՛ տւէ՛ք ինձ, գինի՛ փրփրո՛ւն.
 Իմ լա՛ւ աշխարհում մահը չեն սգում.
 Երգն ու ֆրփիջն է հասնում ամպերուն,
 Գինո՛ւլ է ազգս, կեա՛նքն է օրհներգում:

ԵՐԵՒԱՆԻՆ

Մի փոքրիկ քաղաքում

Նիւ-Եօքից՝ Փարիզ, Փարիզից՝ Թէհրան,
Բաղդադ, Կաիր,
Ուր Կուգես նայիր,
Զ'կայ քեզ նման, լազր, ծաղիկ բոկոսն զ'ն
Իմ լա՛ւ Երեւան...

Արեւելք, հարաւ, արեւմուտք, հիւսիս,
Աշխարհ ամենայն, զձեռք քո քնքշող ձեռքով
Թիրք, Քաթար, չերքէզ,
Մոնղոլ քէ կիրգիզ,
Մարդկութիւն համայն
Թշնամի են քեզ...
Քեզ պաշտպան Մասիս,
Մասիսն է միայն,
Որբի օրեւան,
Իմ ա՛րք Երեւան...

Գլխակոր կանգնած փռուած Երեւան,
Հայեացքդ յառած Երեւան,
Դաշտերին մեռած,
Ինչո՞ւ ես հեծում,
Ի՞նչ ես մտածում...
Սքափի՛ր, ահա քոփ, քւանք առած
Նորերն են եկել քո դուռն են ծեծում.
Ազգերի կայան,
Իմ խեղճ Երեւան...

Ազգե՛ր են անցել, ազգե՛ր անհամար...
Բայց յոյսդ անմար,
Սիրտդ մի՛շտ կանաչ
Ու մի՛շտ անհանաչ
Օտարի համար.
Օտարի գրկում միշտ կոյս մնացած,
Արցունքով օծւած,
Դու կոյսի նման,
Իմ կոյս Երեւան...

Կանաչի՛ր, կանչի՛ր... քո՛ղ աշխարհ համայն
Քո գովքը անի.
Թո՛ղ գործարանի
Ծուխը ծխանի
Բի՛ւր-բի՛ւր գոհերիդ,
Անքի՛ւ որբերիդ
Անհուն բողբոջ, մեր նոր օրերի
Որպէս նոր աղօթք, երկնքին տանի!
Բողոքից ծնւած,
Բողոքով սնւած,
Նոր կեանքի օրրան,
Իմ նո՛ր Երեւան...

ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ

Երկիրը դառել է զնդան.
Բանտերը գերեզման են դառել...
Ի՞նչ եղան հերոսներն այնքան,
Ի՞նչ եղան...
Մե՛կը չէ,
Տա՛սը չէ,
Հարի՛ւր չէ,
Հայաստանն է,
Ողջ ազգն է մեր
Բռնել ախարի մամբան,
Դառել օտարին գերի...

«Բուրբի՛ն, բուրբի՛ն, բուրբի՛ն»...
Հչում էր անքելն անվերջ.
«Թո՛ղ յայտնի լինի ամենին,
Յետ այսու էլ աշխարհի մեջ
Ոչ մի բռնութիւն չի՛ լինի:
Ազգերը հաւասար են հիմա,
Եղբայրներ են բոլոր մարդիկ,
Ազգերը ազատ են հիմա
Ունենալ ազա՛տ Հայրենիք...
Բուրբի՛ն, բուրբի՛ն, բուրբի՛ն.
Այսպէս է պատգամը Լենինի,
Այսպէս ենք ուզում, որ լինի»:

Ու եղա՛ւ...

Դաշտերը արիւնով ներկեցան.
Լեռները դեռ արիւն են ժայթքում.
Մարդիկ գազաններ դարձան
Ու իրար միս են բզկթում...
Լսեցէ՛ք,
Դեռ մտ՛ւմ են նրանք.
Լսեցի՞՞ք,
Զ՛տեսա՞ք միքէ
Դիակներն անքաղ որբերի...
Ի՞նչ կայ որ,
Զէ՞ որ Լի-Թային Շանկհայից
Մեզ համար նոր օր պիտ բերի.
Զէ՞ որ Զինջալին Բոմբէյից
Ասել է Պօղոսին. «Համբերի»...
Եւ գիտէ՞ք.
Պօղոսը համբերեց:

Ու երգո՛ւմ են...

Դեռ սիրտ կայ երգելու:
Ծաղր չէ մի՞թէ երգել
Մի Զինգ-Ֆու,
Եւ կամ Իսուֆը օտար,
Երբ այստեղ մեր երկրի ծոցում
Տառապում են, տանջւում են սովից,
Բիւրաւոր Ղէզօնե՛ր,
Սօզօնե՛ր...
Ոնիր չէ՞ միքէ մոռանալ
Դժոխքը՝ մեր քթի տակին,
Ու գոռալ,
Բուրբի՛ն, բուրբի՛ն,
Հեռաւոր Կօնգոյի մասին...

*

...լենինը Երեսան է եկել.
 Լենինը՝ բրունգէ մի ֆուրմ,
 Աչքերը Արեւելք է յառել,
 Քարացե՛լ...

Քարացել են լեզուները բոլոր.
 Դէմքներին քաշիծն է սառել.
 Մարդիկ ուրուներ են դառել,
 Քայլում են ոլո՛ր-մոլո՛ր...

*

...Բայց այնտե՛ղ, Մասսի խորքերում
 Մէկը կայ՝

Մի ըմբոստ ոգի.

Դարերի իր շղթաներն է կրծում

Ու կանչում է մարդկանց նոր կեանքի...

Եւ կ'գայ,

Պիտի գայ

Կեանքը նոր.

Մասին իր լանջերը պիտ մեղփի:

Շղթայաժը պիտի գայ մի օր

Փշրելու կապանքներն ամենփի:

ՄԵՏԵԻՒՆ

ՄԵՏԵԻՒՆ

Հագա՛ր տարով, հագա՛ր չարով

Թուխս Ես նստել, դաւ դրել.

Մետե՛լս, լսի՛ր, խույ ձայներով

Քեզ քիւր նզովք եմք քերել:

Տեսա՞ր, ինչպէս բռնած նամբան,

Ծանօթ նամբան ափսոսի,

Անիծելով եկա՛ն, անցա՛ն,

Շարանները լաւերի:

Ինչքա՛ն կեանքեր, քահի՛լ քսիրո՛ւն,

Անժամանակ ծերացան.

«Մետե՛լս, Մետե՛լս, անիծի՛ս դուն»,—

Մոմոացին ուն անցան:

Լո՛ւռ ու մոայլ կանգնած են դեռ,

Նոր դաւեր եւ քրո՛նում.

Եկա՛նք, կ'անցնե՛նք. չարն է անմեռ,

Որ անում է ու անում:

ԱՔՍՈՐԻ ՃԱՄԲԻՆ

Բռնել ենք մենք համբան հիւսիսի,
Ջնգում են շղթաները մեր.

Ով գիտէ՞ նոր պատիժ քո՞ղասսի,
Սիրում ենք հայրենիքը մեր:

Սիրում ենք ու սիրով կ'ստանենք
Մեր խաչը, անտրտունջ, ան ցաւ.

Մենք մէկ չենք, հազարներ ու բիւր ենք,
Լռելը՝ էլ անցա՛ւ, անցա՛ւ...

Ջնգում են շղթաները մեր հին,
Նրգում են երգը փայերի.

Շարժում են շարանները կրկին,
Շարանները արի, լաւերի՛:

NOSTALGIE

Ինչքան էլ ուրախ լինեմ ես,
Մա՛յր իմ, երկի՛ր իմ հարազատ,
Սրտումս արցունք ունեմ քեզ,
Կարօտ եմ լեռներին քո ազատ:

Կարօտ եմ Արագածին քո,
Կարօտ եմ Մասիսին քո ծեր,
Որի յաղթ շուփի ներքոյ
Իմ երազ օրերն են անցեր...

Կարօտ եմ Երզնքին քո հին,
Սևաչեայ աղջիկներին քո,
Որ լե-լէն սիրակէզ շուրթերին
Չափում են ձորերը քո:

Հովիւն իր սրինգն է փռել,
Սիրտն է լիք սիրովը քո.
Հանդերդ լալա են հագել
Ամօթխած հարսներով քո:

Ոսկեգոյն սաւան են փռել
Արտերդ ցորենով հուրքի...
Ամպերը սարին են քառել,
Հէ՛յ, մրրիկ ու կարկուտ չ'փրթի՞ր...

.....

Ես մի խենթ, ես մի չար տղայ,
Զափում էի քո ձոր ու սար.
Փոքորիկն ինձ խլեց քեզնից
Ու գցեց օտար մի աշխարհ...

Ու հիմա օտա՛ր այս երկրից,
Էյֆելի կատարից օտար,
Հոգիս իր կամուրջը նետած՝
Կանչում է. «Ինձ տա՛ր, ինձ տա՛ր»...

Ինչքան էլ որ քիչ սիրեմ քեզ,
Մա՛յր իմ, երկի՛ր իմ հայրենի.
Էլի քո բանտը կուզեմ ես,
Քո բանտը դաժա՛ն, վայրենի՛ր...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՕՏԱՐ ԱՓԵՐՈՒՄ**ԾԱՆՕԹ ՇԻՆԴՈՒՀՈՒՆ**

1. Յիշում է՛ք փրօկէն այգին 9
2. Երբ տեսնում եմ Ձեզ փրօկէն 10
3. Լուսամուտիս մօտ ամէն օր 11
4. Օ՛, սիրտս ինչպէս բուռն է զարկում 12

Ֆինլանդիային 13

ԿԱՏԻ ԽԱՂԸ՝ ՄԿԱՆԸ ՄԱՀ Է

1. Ձեզ այնքան սիրողներ կան 14
2. Դուք ամէն օր թէյ է՛ք բերում 15
3. Դուք այնպէս բողբոջեալ գիտէ՛ք 16
4. Կատակում է՛ք այնպէս անհոգ 17
5. Կուգէի, որ Դուք էլ այրէ՛ք 18
6. Օ՛, հիմա ես էլ եմ խաղում 19
7. Գիտեմ, երգերս բարկացնում են Ձեզ 20

ՓՈՔՐԻԿ ՓԱՐԻԶՈՒՀՈՒՆ

1. Այնքան նուրբ եմ 21
2. Երնեկ իմանամ 22
3. Ասում եմ դու վատն ես 23

ՓՈՂՈՑԻ ԱՂԶԿԱՆ

1. Ի՞նչ լաւ էր այսօր 24
2. Դու փողոցն ես սիրում 25
3. Նարից երեկոն փռեց թւերը 26
4. Փողոցներից տուն կ'գա՞ս 27

ՈՒՇԱՑԱԾ ԿԱՆՁԵՐ

1. Էն ե՞րբ էր 28
2. Քեզ այնպէս ամուր 29
3. Ե՞րբ էր եկար ինձ այցի 30
4. Քո շուրթերը բոց 31

Հրէուհուն	32
Ուշացած սէր	33
Ես կ'գամ	34
Վերադարձ	35
1 9 1 8	36
Գունատ աղջկան	37
Մեռած այն աղջկան	38
Սիրտս վիրաւոր	39
Աշնան երգերից	40
Աշուն	41
Զմերային	42
Թաղում	43
Մահը մեր՝ մի յիմար կատակ	44
Կեանք տեղ եմ հողմերին	45
Տխուր մի երգ	46
Երկիր ՆԱԻՐԻ	
Իմ նոր աշխարհը	49
Երեսնին	50
Երկիր Նաիրի	52
Մեռելին	55
Ախարի նամբին	56
Nostalgie	57
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	61



Imp. de Navarre, 5, rue des Gobelins. Paris XIII.

ՀՀ Ազգային գրադարան



NL0347543

45625

